ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 33-Լ

«05» 06 2026թ. ք. Երևան

ԴԱՏԱԽԱԶՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԱՌԱՋԻՆ ՀԱՏՎԱԾԻ «ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԱՐԴԻ ՀԱՐՑԵՐ» ԴԱՍԸՆԹԱՑԻ ԳՐԱՎՈՐ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ԳՆԱՀԱՏԵԼՈՒ, ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐԸ ՔՆՆԵԼՈՒ ԵՎ ԼՈՒԾԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՈՒ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐ ՁԵՎԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ելնելով ՀՀ արդարադատության ակադեմիայի կառավարման խորհրդի 2026 թվականի մայիսի 18-ի թիվ ԿԽ-010/26 որոշմամբ հաստատված՝ դատախազների թեկնածությունների 2026 թվականի ցուցակում ընդգրկված անձանց մասնագիտական պատրաստման «Քրեական իրավունքի արդի հարցեր» դասընթացի գրավոր քննության արդյունքները գնահատելու, իսկ արդյունքների հետ կապված բողոքները քննելու և լուծելու համար, համապատասխանաբար, գնահատման և բողոքարկման հանձնաժողովներում դատախազ անդամներ նշանակելու անհրաժեշտությունից, հիմք ընդունելով «Արդարադատության ակադեմիայի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 2-րդ և 7-րդ մասերը, ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով և 30-րդ հոդվածի 3-րդ մասով՝

Հրամայում եմ՝

1. Դատախազների թեկնածությունների 2026 թվականի ցուցակում ընդգրկված անձանց մասնագիտական պատրաստման «Քրեական իրավունքի արդի հարցեր» դասընթացի գրավոր քննության արդյունքները գնահատելու համար ձևավորել գնահատման հանձնաժողով՝ հետևյալ կազմով՝

Հայկ Հովհաննիսյան - ՀՀ գլխավոր դատախազության սահմանադրական կարգի հիմունքների, պետության և հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության պետ,

Արմեն Մուրադյան – Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների դատախազ,

Արմեն Օսեյան – Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի դատախազ,

Նիկոլայ Բարսեղյան – Արագածոտնի մարզի դատախազ,

Կարեն Սուքիասյան – Կոտայքի մարզի դատախազ:

2. Դատախազների թեկնածությունների 2026 թվականի ցուցակում ընդգրկված անձանց մասնագիտական պատրաստման «Քրեական իրավունքի արդի հարցեր» դասընթացի գրավոր քննության արդյունքների հետ կապված բողոքները քննելու և լուծելու համար ձևավորել բողոքարկման հանձնաժողով՝ հետևյալ կազմով՝

Արամ Արամյան - ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ,

Դավիթ Աղաջանյան - Երևան քաղաքի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների դատախազ:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

4. Սույն հրամանի կատարման վերահսկողությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը:

5. Սույն հրամանի պատճենն ուղարկել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության վարչությունների պետերին, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների և մարզերի դատախազներին, կայազորների զինվորական դատախազներին, Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության բաժինների պետերին, ավագ դատախազներին, Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարին և տեղակալներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի խորհրդականներին ու օգնականներին:

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ԴԱՍԻ ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿԱՆ **Ա.ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ**